ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶ

# ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201

☎ /0232/ 3-10-26, 3-52-02

*01 հունիսի 2013թ.*

*Թիվ 648*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,

ՊԱՐՈՆ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ներկայացվում է Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու 2013թ. մայիսի 31-ի արտահերթ նիստում /արձ. 8/ ընդունված որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

01 06 2013
5/2659-13

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ն Ե Ր

*/արձանագրություն հմ. 8/*

*Կայացած՝ 31.05.2013թ.*

*թերթերի թիվը՝ «—1—»*

ք. ԱՇՏԱՐԱԿ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*31-ը մայիսի 2013թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ <ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂ> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

## N 1-Ա ՈՐՈՇՈՒՄ

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Աշտարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի ու կոյուղու համակարգերը /սեփականության իրավունքի վկայականներ N 2724109 և N 2724110, տրված 02.06.2011թ./ մինչև 2035 թվականի հուլիսի 1-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով հանձնել <Հայջրմուղկոյուղի> փակ բաժնետիրական ընկերությանը:
2. Աշտարակի քաղաքապետ պարոն Ա. Անտոնյանին՝
   - սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում <Հայջրմուղկոյուղի> փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի հետ կնքել՝ սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը,
   - պայմանագրի կնքման գործարքն իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ -
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ-
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ-
ԱՐՄԵՆ ՂԱԼԱՉՅԱՆ-
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՏՈՒՐՅԱՆ-
ԱՐԱՄ ՔԱՄԱԼՅԱՆ -
ՍՏՅՈՊԱ ՔԱՍՅԱՆ-
ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ-

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ-
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ-
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ -
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ-
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ-
ԿԱՐՈ ԳԱՍՊԱՐՅԱՆ-
ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ -

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն